

դաշնակ կամ ջուլթակ և կամաւոր ֆրանս. կամ գերմ. շաբաթական 36 ժամ) ըսել է միջին հաշուով իւրաքանչիւր մնայուն ուսուցչի շաբաթական աշխատութեանց բաժինն է 16 ժամ: Սոյն 17 պաշտօնէից կը վճարուի տարեկան 1632 լիրա. վարձքի, բժշկին, ծառաններուն և ուրիշ մանր ծախքերուն ալ յատկացուր 368 լիրա մերձաւորաբար, կ'ուեննաս 2000 լիրա, ուրկէ կը հասկցուի թէ գիշերօթիկ և ցերեկեայ աշակերտաց համար կը ծախսուի գրեթէ 2000 լիրա: Ամբողջ տարեծախսը արդէն յայտնեցինք թէ կը յանգի 4000 լիրայի, որուն 1200 լիրան կը գոյանայ հիմնադրին հասոյթէն, 22 լիրա Ալիանս ֆրանսէզէն, աւելի քան 2000 լիրա թռչակներէ, իսկ տարեկան բացը կը գոցուի հիմնադրին ձգած դրամագլխով: Պաշտօնէից ամսականներն ու աշխատութեանց ժամանակը և որակը, դպրոցին ծախքի քանակն ու բնութիւնը համառօտապէս ցոյց տալով կը բաւականանամ. ընթերցողին կը թողում քննել և դատել թէ՛ գործք և վարձք, պէտք և ծախք ինչ չափով և աստիճանով զիրար կը հաւասարակշռեն: Երբ հրատարակուի Ցեղեկագիրը՝ բնականաբար մեղի պիտի պարզէ մանրամասնութիւններ վարժարանին ելեմտից:

ՊՈԼՍԻ ՀԱՅ ԹԱՂԱՅԱՆ ՎԱՐՎԱՐԱՆՆԵՐԸ

4. Պոլսի Հայոց Պատրիարքարանի իշխանութեան տակ գոյութիւն ունեցող «Աւսումնական խորհուրդը», որի այժմեան ատենապետն է բժշկագետ Վահրամ Թորգոմեանը, հրատարակել է Պոլսի թաղային վարժարանների վիճակացոյցը (1902 թուի յունուար 1-ին), Այդ հրատարակութիւնից տեղեկանում եւք, որ այս 1902-ին Պոլսում կայ Հայոց թաղային վարժարան ընդ ամենը խոստումն հատ: Այդ 40 տարրական դպրոցներում (1—7 տարուայ դասընթացքով) սովորում են 5376 աշակերտ և աշակերտուհի, որոնցից 2048 ձրիավարժ: Ծաղկոցներում՝ մանչ 1170, աղջիկ 965, միւս դասարաններում աշակերտ մանչ 2018 հոգի, աղջիկ 1223 հոգի: Ուսուցիչների թիւն է 188, ուսուցչուհիներինը 110, ընդամենը 298. Ամսական ծախս է լինում այդ բոլոր դպրոցների վրայ ընդ ամենը 83.486 զուրուշ որ բաժնեւելով 300 ուսուցչի վրայ՝ իւրաքանչիւրին միջին թուով ընկնում է ամսական մոտաւորապէս 280 զուրուշ: Բացի այս 5376 սովորողներից 1823 հոգի էլ յաճախում են

պետական և այլ մասնաւոր դպրոցները. ուրեմն ընդ ամենը 7199 սովորող: Սրանցից 220 մանչ—պետական վարժարաններում, 400 մանչ և 150 աղջիկ հայ մասնաւոր վարժարաններում, 270 մանչ և 191 աղջիկ—հայ—կաթոլիկ և հայ բողոքական վարժարաններում, 208 մանչ և 290 աղջիկ—օտարաղգի (եւրոպացիների) վարժարաններում: Բոլոր ծախսի գրեթէ երկու երրորդականը (51,599 զուրուշ ամսական) վճարում են «եկեղեցական սնտուկները», իսկ մնացածը գոյանում է թոշակներից (26,097 զուրուշ) և նուէրներից (5,790 զուր.): Կոտորածներից յետոյ 1897 թուից սովորողների թիւը աւելացել է՝ 3765-ից բարձրանալով 1902 թուին մինչև 5376-ի: Աւսուցիչների թիւը կէոր թուով 200-ից բարձրացել է 300-ի, իսկ տարեկան ծախսը չէ աւելացել: 10 զուրուշը հաշուելով մի բուրլի՝ Պոլսի հայութիւնը կէոր թուով իւր տարրական դպրոցների վրայ ծախսում է տարեկան հարիւր հազար բուրլի: Պոլսում հաշուելով 150 հազար հայ՝ իւրաքանչիւր մարդ գլուխ դպրոցական ծախս է ընկնում (տարրական դպրոցների համար) 66 կոպէկ, իւրաքանչիւր 21 մարդուն—մի աշակերտ, իւրաքանչիւր 4 ընտանիքին (ընտանիքն հաշուելով 5 հոգուց)—մի աշակերտ, Իսկ եթէ ենթադրենք Պոլսում միմիայն 100 հազար հայ՝ իւրաքանչիւր մարդուն կընկնի մի բուրլի ծախս, 14 հոգուն կամ 3 ընտանիքի—մի աշակերտ:



## ՀՅՅՈՑ ԵՒ ԵՆԼՈՒԹԻՒՆԸ ՀՈՆԱՑ ԱՅՍԵՐ ՀՈՒՄ (Չ. ԳԵՐ)

Հին հայոց քարոզչական գործունէութեան նկատմամբ շատ բան չգիտենք, մինչդեռ այդ աննշանակ չէ նոցա քաղաքակրթական դերը որոշելու համար արեւելքում: Պատմագիրներն աւանդում են, որ հայերը քարոզել են քրիստոնէութիւն Ազուանքում և մասամբ Վրաստանում: Սակայն երկուում է, որ նոցա աւետարանող ձայնը հնչել է նաև Կովկասեան շղթայի այն կողմը: Այս մասին ստոյգ և խիստ հետաքրքիր տեղեկութիւններ կան ասորի մի հեղինակի մօտ, որ 1870 թ. հրատարակեց Վր. Լանդ՝ Բրիտանական մուզէի